ՆՊԱՏԱԿԱՈՒՂՎԱԾ ՀՐԱՇՔ
MIRACLE WITH A PURPOSE

*2 Օրինաց 18.15-19 – 15 Քո Տեր Աստվածը քո եղբայրների միջից ինձ նման մի մարգարե մեջտեղ պիտի հանի քեզ համար. նրա՛ն լսեք. 16 ամբողջապես այնպես, ինչպես որ Քորեբում հավաքի օրը քո Տեր Աստծուն խնդրեցիր՝ ասելով. "Իմ Տեր Աստծու **ձայնն այլևս չլսեմ** և այդ մեծ **կրակն այլևս չտեսնեմ**, որպեսզի չմեռնեմ": 17 Այն ժամանակ Տերն ինձ ասաց. "Լավ է, ինչ որ նրանք ասում են. 18 ես քեզ նման մի մարգարե մեջտեղ կհանեմ նրանց համար իրենց եղբայրների միջից և իմ խոսքերը կդնեմ նրա բերանը. նա նրանց կասի այն, ինչ որ կպատվիրեմ նրան: 19 Եվ այն մարդը, որ չլսի իմ խոսքերը, որ նա կասի իմ անունից, ես այդ մարդուց հաշիվ կպահանջեմ:*

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԳՈՐԾ. 2.1-13

Գործ. 3.1-26 - 1 Պետրոսն եւ Յովհաննէսը գնում էին միասին տաճարը իններորդ ժամի աղօթքին: 2 Ի ծնե կաղ մի մարդ կար, որին ամեն օր բերում էին տաճարի դռան մոտ, որ, Գեղեցիկ էր կոչվում, որպեսզի նա տաճար մտնողներից ողորմություն խնդրեր:3 Երբ նա տեսավ Պետրոսին ու Յովհաննեսին տաճար մտնելիս, ողորմություն խնդրեց նրանցից: 4 Պետրոսը Յովհաննեսի հետ նայեց նրան ու ասաց. Մե՛զ նայիր: 5 Նա հայացքը նրանց վրա դարձրեց՝ ինչ-որ բան նրանցից վերցնելու ակնկալիքով: 6 Պետրոսն էլ ասեց. Արծաթ եւ ոսկի չ'ունեմ. Բայց ինչ որ ունիմ, այն քեզ կ'տամ. Յիսուս Քրիստոսի՝ Նազովրեցու անունով վեր կաց եւ քայլիր: 7 Եվ նա, բռնելով նրա աջ ձեռքից, նրան ոտքի կանգնեցրեց, և նրա սրունքներն ու ազդրերն իսկույն ամրացան: 8 Վեր թռավ, կանգնեց եւ ման էր գալիս, եւ նորանց հետ մտավ տաճարը ման գալով եւ վազ տալով եւ Աստուծուն օրհնելով: 9 Ամբողջ ժողովուրդը տեսավ նրան, որ քայլում էր և օրհնում Աստծուն: 10 Եվ ճանաչում էին նրան, որ ողորմության համար նստում էր տաճարի Գեղեցիկ դռան մոտ: Եվ պատահածի համար լցվեցին երկյուղով ու զարմանքով:

Մար. 16.20 - 20 Նորանք էլ դուրս գնացին, ամեն տեղ քարոզում էին, եւ Տէրը գործակցում էր նորանց եւ խօսքը հաստատում էր այն նշաններովը որ հետեւում էին: Ամէն:

Ինչպիսի՞ բուժիչ հրաշքների եք Դուք ականատես եղել կամ մասնակից եղել:

What kind of healing miracles have you witnessed or been a part of?

I. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՄԻՇՏ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է, ՈՐ ՄԵՆՔ ՓԱՌԱՎՈՐԵՆՔ ՅԻՍՈՒՍԻՆ:
THE HOLY SPIRIT ALWAYS WANTS US TO GLORIFY JESUS.

9 Ամբողջ ժողովուրդը տեսավ նրան, որ քայլում էր և օրհնում Աստծուն:

Յով. 2.11 - 11 Նշանների սկիզբը Յիսուսն այս արաւ Գալիլեայի Կանայում. եւ իր փառքը հայտնեց. եւ նորա աշակերտները հավատացին նորան:

11 Մինչ նա Պետրոսին ու Հովհաննեսին բաց չէր թողնում, ամբողջ ժողովուրդը երկյուղած վազեց նրանց մոտ՝ այն սրահը, որ Սողոմոնի սրահ էր կոչվում: 12 Երբ Պետրոսը տեսավ, ժողովրդին ասաց.

Հիսո՛ւս, սիրելի՛ս, հպվի՛ր մարմնիս,
Թող մարմինս բժշկվի, որ մեր Հայրը փառավորվի:

- ***Այս դրամատիկ բուժիչ հրաշքը բացեց Պետրոսի համար քարոզելու դուռը, և հազարավոր մարդիկ փրկվեցին: Օրինակը նույնն էր, ինչ ասում էր Պողոս առաքյալը.***

  Ա Կորնթացիս 4.20 – Որովհետև Աստծու արքայությունը ոչ թե խոսքով է, այլ զորությամբ:

  Գործ. 14.3 - 3 Եւ նորանք շատ ժամանակ այնտեղ մնացին համարձակ խօսելով Տիրոջ վերայ, որ վկայում էր իր շնորհաց խօսքին. Եւ նշաններ եւ հրաշքներ էր լինել տալիս նորանց ձեռովը:

  *Եբրայեցիս 2.4 – Աստված այն վկայեց նշաններով, հրաշքներով, տեսակ-տեսակ զորություններով և Սուրբ Հոգու պարգևներով. **<u>ըստ իր կամքի կամեցավ</u>:***

  1 Կոր. 12.4,11 - 4 Պարգեւները զանազան են, բայց Հոգին նոյնն է: 11 Բայց այս ամենը հէնց միեւնոյն Հոգին է ներգործում, ամեն մէկին բաժանելով ինչպէս կամենում է:

II. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԲԺՇԿՈՒՄ Է ՄԱՐԴԿԱՆՑ ՀՈԳԻՆԵՐԸ:
THE HOLY SPIRIT HEAL PEOPLE'S SOULS.

Տեսնու՞մ եք Սուրբ Հոգու իրական զորությունը այստեղ է գործում:

19 Արդ ապաշխարե՛ք ու դարձի՛ եկեք, 20 որպեսզի ձեր մեղքերը ջնջվեն...

Գործ. 4.4 - 4 Եւ այս խօսքը լսողներից շատերը հավատացին. Եւ հավատացյալների թիվը շուրջ հինգ հազար եղավ:

- ***Զգացմունքային և հոգևոր բուժումը համարժեք է ֆիզիկական բուժմանը:***

  1 Պետ. 2.24 - 24 Նա մեր մեղքերն իր մարմնով խաչափայտի վրա բարձրացրեց, որպեսզի մեղքերից հեռանալով՝ արդարության համար ապրենք. դուք նրա վերքերով բժշկվեցիք: (Եսայի 53.35)

  3 Հով. 1.2 - 2 Սիրելի՛ս, աղոթում եմ քո բոլոր հաջողությունների և քո առողջության համար, ինչպես քո հոգին է հաջողության մեջ:

III. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՀՐԱՇՔՆԵՐ Է ԳՈՐԾՈՒՄ՝ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՌԱՋՆՈՐԴԵԼՈՒ ԴԵՊԻ ՔՐԻՍՏՈՍ ԵՎ ՀԱՎԱՏՔ ՆԵՐՇՆՉԵԼՈՒ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ:

THE HOLY SPIRIT WORKS MIRACLES TO LEAD PEOPLE TO CHRIST AND TO INSPIRE FAITH IN BELIEVERS LIFE.

*Գործ. 8.5-9,13-14 - 5 Եւ Փիլիպպոսն իջաւ Սամարիայի մի քաղաք՝ եւ Քրիստոսին
քարոզում էր նորանց: 6 Ժողովուրդներն էլ միաբան լսում էր Փիլիպպոսի խոսքերը
և տեսնում նրա կատարած նշանները: 7 Քանի որ շատերի միջից պիղծ ոգիները
բարձրաձայն աղաղակելով դուրս էին գալիս: 8 Եւ բազում անդամալոյծներ ու
կաղեր էին բժշկվում: 9 Եւ մեծ ուրախութիւն եղաւ այն քաղաքումը:*

*14 Երբոր Երուսաղէմ լինող առաքեալները լսեցին, թէ Սամարիան Աստուծոյ
խօսքը ընդունեց, Պետրոսին եւ Յովհաննէսին ուղարկեցին նորանց մօտ:*

- ***Երկու կարևոր կետ, որոնք կապված են հրաշքների և բժշկության հետ.***

  1. ***Մենք պետք է վստահություն ունենանք Աստծո բնավորության վրա... We need to have confidence in the character of God...***

     *Մատ. 9.28-29 - 28 Եւ երբոր տունը մտաւ, կոյրերը նորա մօտ
     եկան. եւ Յիսուսը նորանց ասեց. Հաւատո՞ւմ էք թէ կարող եմ
     այդ անել, նորան ասեցին. Այո, Տէր:*

  2. ***Ինչպե՞ս պետք է արձագանքել, եթե Տերը չի պատասխանում բժշկության համար այդ աղոթքներին և չի տալիս մարդուն այն բժշկությունը, որը նրանք փնտրում են:***

     *Եսայի 55.8-9 – Արդարև, իմ խորհուրդները ձեր խորհուրդները
     չեն, և ձեր ճանապարհներն իմ ճանապարհները չեն,- ասում է
     Տերը:- Այլ ինչպես երկինքն է բարձր երկրից, այնպես էլ իմ
     ճանապարհները բարձր են ձեր ճանապարհներից, և իմ
     խորհուրդները՝ ձեր խորհուրդներից:*

Աստված ամեն ինչ կանի կատարյալ պահին: Աստվածաշնչում ասվում է, որ «տղամարդը ի ծնե կաղ էր...» և նա նստած էր ամբողջ մարդկության ուշադրության կենտրոնում: Մի պահ մտածեք, թե քանի անգամ է Հիսուսը քայել այդ մարդու կողքով, բայց նա բժշկություն չստացավ: Աստված այլ ճանապարհ և այլ ժամանակ էր պատրաստել այս մարդու բուժման համար, և դա իր աշակերտների միջոցով էր ճիշտ պահին և ճիշտ ժամանակին:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ